

Ներկայիս Միջին Արեւելքի մէջ եւ յատկապէս Սուրիոյ մէջ ծաւալուող արինալի դէպքերու լոյսին տակ դիտելով Կիլիկիոյ կոտորածները, դժուար չէ հաստատել թէ չկայ «հին» ու «նոր» թուրք՝ ան նոյն ծաւալապաշտ ու ազգայնամոլ պետութիւնն է, որ ամէն առիթի կը սպասէ ընդարձակուելու շրջանին մէջ՝ հասնելու համար Զինաստանի սահմանները, այսինքն ստեղծելով համա-թուրանական (նախկին անւանմամբ՝ համիսլամական) ընդարձակ պետութիւն մը, որուն համար ան կը դիմէ խարդաւանքներու, պատերազմներու եւ ազգային զտման միջոցներով՝ վկայ 1974-ին հիւսիսային Կիպրոսի վրայ կատարած իր ներխուժումը եւ հիւսիսային Սուրիոյ քիւրտերու դէմ իր սանձազերծած իբր թէ զսպիչ «գործողութիւնները», (իմա՝ ռազմական յարձակումները - Մ. Գ.):

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Բնաւ մտադրութիւն չունիմ յարաբերութիւններս փճացնել թէ՛ դրախտի, թէ՛ դժոխքի հետ... Յիշատակուած երկու տեղն ալ բարեկամներ ունիմ:

Թշնամիներու հանդէպ ներողամիտ եղէք, բայց անուննին մի՛ մոռնաք:

Տնային պարտականութիւններով ուսուցիչներ ոչ թէ աշակերտները, այլ ծնողքը կը կրթեն:

Ազատութիւնը քչերուն վերապահուած շռայլութիւն է:

Պատերազմ յայտարարողները ծերերն են, մահացողը՝ երիտասարդները:

Ղեկավարել կը նշանակէ գիտակ մարդոց չխանգարել աշխատել:

Եթէ դուն չփնտռես՝ միւսները կը գտնեն:

Արագ գրողներու դժբախտութիւնը երկար գրելու մէջ է:

Հարազատ բարեկամէն ստացած վնասակար խորհուրդը նման է ոսկի գաւաթէն թոյն խմելուն:

Կայծը հրդեհ դարձնողը լեզուն է:

Թշնամիներն են որ ճիշդ կ'ըսեն, բարեկամները՝ երբեք: